ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/1

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան **«15» հունվարի 2019թ.**
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ Ա. Մեսրոպյան:

Հանձնաժողովի անդամներ ՝
ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ՝ Հ. Ծատուրյան:
Բացակայում էր
ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ՝ Գ. Բոյաջյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
Սահմանված ժամկետում Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի կողմից ներկայացվել է պահանջվող փաստաթուղթը, սակայն գնահատող հանձնաժողովի անդամների կողմից արձանագրվեց, որ գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետը Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի հայտը գնահատել անբավարար և մերժել:
2) ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:
3) Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացկարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:
4) Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի տվյալները և ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1 ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը ուղարկել ֆինանսների նախարարություն՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ սկսելու նպատակով

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- **Ա. Մեսրոպյան**

Հանձնաժողովի անդամներ՝ ---------- **Հ. Ծատուրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- **Ա. Եղիազարյան**